**Հայկական Առողջապահական
Ազգային Խորհուրդ**

Հայաստանի Հանրապետություն, ք. Երևան հեռ. +374 (93) 063 003

Աբովյան 34/3 էլ. փոստ armhealthcouncil@gmail.com

ՀՀ առողջապահության նախարար

Արսեն Թորոսյանին

Կրկնօրինակը՝ ՀՀ առողջապահության նախարարության
«Ս. Ավդալբեկյանի անվան առողջապահության ազգային
ինստիտուտ» փակ բաժնետիրական ընկերության
Մասնագիտական Գործունեության Հավաստագրման Ազգային
Կենտրոնի տնօրեն Սոնա Սարգսյանին

Ս/թ հունվարի մեկից «Երիտասարդ բժիշկների հայկական ասոցիացիա» ՀԿ-ն Եվրոպական միության ֆինանսավորմամբ և «Կառուցողական երկխոսության հանձնառություն» շրագրի շրջանակներում իրականացրել է 6 ամսյա ծրագիր՝ ուղղված շարունակական մասնագիտական զարգացման բարելավմանը: Ծրագրի ընթացքում մասնագիտական հանձնախմբի և փորձագետների հետ ուսումնասիրվել է Շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտավորման համակարգը **կանոնակարգող «06» մայիս 2017 թվականի No 1491-Ա, «26» ապրիլ 2019թ. No 20 – Ն հրամանները, «Բնակչության բժշկական օգնության եվ սպասարկման մասին» ՀՀ օրենքը, «Դեղերի մասին» ՀՀ օրենքը,** մասնագիտական խմբի կողմից իրականացվել է մոնիտորինգ՝ ՀՀ մարզերում և Երևան քաղաքում գործող բուժհաստատություններում՝ պարզելու համար շարունակական մասնագիտական զարգացման կրեդիտավորման համակարգի վերաբերյալ բուժաշխատողների մտահոգությունները (կցված է **Հարցաթերթիկի** նմուշը), ուսումնասիրվել է Բժիշկների շարունակական մասնագիտական զարգացման (այսուհետ ՇՄԶ) վերաբերյալ միջազգային փորձը:

Գնահատելով և վերլուծելով մեր ունեցած տվյալները, հաշվի առնելով բուժաշխատողների մտահոգությունները և շահագրգռվածությունը, ՀՀ

Առողջապահության Նախարարությանը՝ Ի դեմս նախարար Ա. Թորոսյանին և նախարարության կառուցվածքային միավոր հանդիսացող Ավդալբեկյանի անվան Առողջապահության ազգային ինստիտուտ ՓԲԸ-ի ենթակայությամբ գործող Մասնագիտական Գործունեության Հավաստագրման Ազգային Կենտրոնին՝ ի դեմս Ս Սարգսյանին, ներկայացնում ենք մեր առաջարկների փաթեթը՝ միտված վերը նշված ոլորտի բարեփոխմանը:

Ուսումնասիրելով **«06» մայիս 2017 թվականի No 1491-Ա և «26» ապրիլ 2019թ. No 20 – Ն հրամանը,** վերլուծելով Երևան քաղաքի և ՀՀ մարզերի ավելի քան 20 բուժհաստատություններում անցկացրած սոց հարցումների պատասխանները ՇՄԶ կրեդիտավորման վերաբերյալ, ուսումնասիրելով այդ ոլորտում համաշխարհային փորձը, ներկայացնում ենք հետևյալ առաջարկները, որոնք կբարելավեն ոլորտային քաղաքականությունը, կշտկեն թերացումների զգալի մասը և որակապես այլ հարթության կբերեն ՇՄԶ կրեդիտավորման համակարգը՝ ապահովելով բժիշկների մասնագիտական զարգացումը Երևան քաղաքում և ՀՀ մարզերում:

1. Առաջարկում ենք ստեղծել և հանրայնացնել մեկ միասնական հարթակ, որտեղ բուժաշխատողները կկարողանան տարվա կտրվածքով տեսնել բոլոր ՇՄԶ կրեդիտավորված միջոցառումները ըստ մասնագիտացումների և անցկացման վայրերի

2. Առաջարկում ենք ՇՄԶ միջոցառումներին մասնակցության վերահսկողության նպատակով կիրառել շտրիխ-կոդերի համակարգ, որի միջոցով կրեդիտներ տրամադրող կառույցը կկարողանա հեռահար կերպով վերահսկել մասնակցությունը՝ սկանավորելով բուժաշխատողին տրված անհատական քարտը :

3. Առաջարկում ենք բուժաշխատողների համար սահմանել պարտադիր մասնակցություն և տարեկան կրեդիտների ապահովում ՇՄԶ կրեդիտավորված միջոցառումներին հետևյալ ուղղվածությամբ՝

- Մասնագիտական ուղղվածության
- Բժշկական էթիկայի ուղղվածության
- Հոգեբանություն
- Վարակիչ հիվանդություններ
- Պալիատիվ խնամք

4, Առաջարկում ենք, որ կրեդիտավորումը բաշխված լինի ըստ տարիների, այսինքն, եթե նախատեսված է 5 տարում հավաքել 220 ՇՄԶ կրեդիտ, ապա յուրաքանչյուր տարի բժիշկը պարտավոր է մասնակցել և ապահովել 45 կրեդիտ

5. Առաջարկում ենք, որ ԲՈՒՀ-ում դասավանդումը ձևակերպվի որպես ինքնակրթություն և կրեդիտավորվի

6. Առաջարկում ենք, որ կրեդիտավորումը իրականացվի մասնագիտական միավորումների կողմից, սակայն վերահսկողությունը վստահվի ՀՀ առողջապահության նախարարության ենթակայության տակ գործող ՄԳՀԱԿ-ին, ինչով կնվազվեն ոլորտում կոռուպցիոն ռիսկերը

7. Առաջարկում ենք ՇՄԶ կրեդիտավորված միջոցառումներ կազմակերպող կառույցների հետ համատեղ մշակել և ներդնել միջոցառումների համաչափ բաշխման համակարգ, որը կապահովի միջոցառումների իրականացումը ՀՀ բոլոր մարզերում:

8. Առաջարկում ենք ՇՄԶ կրեդիտավորված միջոցառումներ կազմակերպող կառույցների հետ համատեղ մշակել կազմակերպվող միջոցառումների համաչափ բաշխում՝ ըստ մասնագիտացումների:

9. Առաջարկում ենք հետադարձ կապի ապահովումը /նախա- և հետթեստ/ դարձնել պարտադիր նախապայման հավաստագրերի վավերացման համար:

10. Առաջարկում ենք վերպատրաստումների ծրագրերը լինեն հրապարակված և մանրամասնած:

Վերը նշված առաջարկները մեր իրականացրած վերլուծության ընդհանրացումն է:

Առաջարկում և ակնկալում ենք հանդիպում-քննարկում, որի ընթացքում մանրամասն կներկայացվի մեր հետազոտության ժամանակ առանձնացրած առաջարկների փաթեթն ամբողջ ծավալով:

Ծրագրի ղեկավար՝ Գևորգ Գրիգորյան